

**ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ ՊՐՈՊԵՆՔԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ
(ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ)**

ՍՈՒՐԲ ԱԲԱՋԱՆԻ ՕԾՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ

Կիրակի, Յունիս 20ին Պրոպենքի Հայց. Եկեղեցւոյ մէջ (Առաջնորդանիստ Մայր Տաճար) առաւօտեան ժամը 11:00ին Սուրբ Պատարագ մատոյց Պրոպենքի Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խաժակ Քինյ. Շահպազեան: Արարողութեան մասնակցեան Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, Տ. Սիփան Աւագ Քինյ. Մխսեան, Տ. Սուրեն Աւագ Քինյ. Ծատուրեան եւ Սարկաւազները:

«Հայ Մեր»էն առաջ «Հայրերու Տօն»ի առթիւ քարոզեց Հայր Սուրբը, որուն մէջ ըսաւ.-

Նոր Կտակարանը շատ անգամներ, Աստուած կը կոչէ «Հայր» կամ «Երկնաւոր Հայր»: Ասոր Կողքին ունինք նաեւ երկրաւոր հայր: Տասնաբանեայ Պատուիրաններուն հինգերորդը յստակ բառերով կը պատուիրէ մարդուս.- *«Պատուէ՛ հայրդ ու մայրդ, որպէսզի բարիքներով բախտաւորուիս եւ երկարամեայ ըլլաս բարիքներով լեցուն»* (Ելից Ի. 12):

Ջարմանալի է, որ այս մէկը միակ պատուիրանն է, որուն կցուած է աստուածային կարեւոր խոստում մը.- եթէ մէկը պատուէ իր հայրն ու մայրը՝ ան արժանի պիտի ըլլայ հոգեւոր բարիքներով լեցուելու եւ նիւթական բարիքներով ալ երկարակեաց դառնալու Աստուծոյ օրհնութեամբ: Սակայն, Աստուծոյ բոլոր Պատուիրաններուն պահպանումով եւ Աստուծոյ հետ մեր ապրումն է աղբիւրը մեզի կու տայ խաղաղ, հանգիստ, ուրախ եւ աստուածային մխիթարանքներով լեցուն կեանք մը:

Ասոր համար է, որ Դաւիթ Մարգարէ կ'ըսէ.- *«Տէ՛ր, վստահ եմ, որ բարութիւնդ եւ շնորհքդ անպակաս պիտի ըլլան ինձմէ՛... կեանքիս ամբողջ տեւողութեան»* (Սաղմոս 24, 6): Բայց, ի՞նչ է արդեօք մեր Հայրերուն առաքելութիւնը: Գիտենք թէ այր մարդը զլուխն է ընտանիքին, բայց չմոռնալ Պօղոս Առաքելին խօսքը, թէ *«Ամէն այր մարդու զխուխը՝ Քրիստոսն է»* (Ա. Կորնթ. Է. 10-15): Աստուածաշունչը կը յանձնարարէ բոլոր հայրերուն՝ ըսելով.- *«Մի՛ բարկացնէք ձեր զաւակները, այլ զանոնք մեծցուցէք Քրիստոնէական Դաստիարակութեամբ»* (Եփեսացիս Զ. 4): Սիրել ու յարգել ծնողները՝ մարդկային կեանքին սկզբունքն է, պայմանն է:

Պատարագիչ Տէր Հայրը շնորհաւորեց բոլոր հայրերը եւ զանոնք դէպի խորան հրաւիրելով մէկական մոմ բաժնեց եւ բարեմաղթութիւններ կատարեց:

Առաջնորդ Սրբազան Հայրը Սանթա Գլարիթայի Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցիէն վերադառնալով, հանդիսապետեց արարողութեան: Սուրբ Պատարագի աւարտին Հոգեհանգստեան Պաշտօն կատարուեցաւ ննջեցելւներու եւ յատկապէս Վարդգէս Պարսամի հոգիին համար: Տիկին Ճին Պարսամ եւ դուստրը Լինտա ներկայ գտնուեցան արարողութեան: Սրբազան Հայրը գոհունակութեամբ յայտարարեց, թէ Աստուծոյ օգնութեամբ աւարտած էր Առաջնորդանիստ Մայր Տաճարին Սուրբ Մկրտութեան Աւագանին աշխատանքը եւ օծումը պիտի կատարուի: Յատկապէս յիշեց անոր հանգուցեալ բարերար՝ Վարդգէս Պարսամը, որուն հոգիին համար աղօթեցին բոլորը:

Հոգեհանգիստէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայրը Դպրաց եւ Սարկաւազաց Դասի եւ հոգեւորականներու կողմէ «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի Մայր Տաճար, ուր յատուկ արարողութեամբ Օծումը կատարեց Սուրբ Մկրտութեան Աւագանին: Սրբազան Հայրը տուաւ կարճ պատգամ մը՝ շեշտելով Սուրբ Մկրտութեան Խորհուրդին կարեւորութիւնը քրիստոնէաներուն համար եւ հոգեկան ցնծութեամբ յայտնեց, թէ Սուրբ Աւագանին մէջ հազարաւոր երախաներ պիտի մկրտուին եւ անոնց անմեղ աղօթքները պիտի բարձրանային Աստուծոյ՝ յիշելով Վարդգէս Պարսամի հոգին: